

ԱՔԵՏԱՔԷՐ



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ”. ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺԵ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1886

ԹԻԻ 2


ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՐԵՍԻՍ

Անգղիոյ Պետ. ֆորտապաքին մէջ ոչ շատ հեռու այն տեղէն ուր ծնա. Յովհաննէս Պրնիան, կը կենայ նորա ար. ձանը, որոյ պատկե. ըր դրուած է հոս :

Պետաֆորտի դու. ք. սը, Անգղիոյ հա. ըրտապաքին ըրտե. ընն մին, նուիրեց զայն քաղաքին յա. մին 1874. Այս ար. ձանը կը ներկայա. ցունէ զՊրնիան իբր թէ կը քարոզէ ժո. զովրդէ տան իւր ձեռքն ունենալով բաց Աստուածա. շունչ մը :

Բայց Պրնիան կը յիշուի զլիսաւորա. պէս իբր մատենա. գիր և ոչ իբր քա. ըրողիչ, և մանաւանդ իբր հեղինակ “Քը. ըրտաֆորտի ձան. ըրողութիւնը” ա. նուն զարմանալի գրքին : Որչա՛փ հա. ճութեամբ կար. դացած ենք զայն

և անձկալից հետաքրքրութեամբ հե. տեած ենք ֆրիստիանտի ընթացքին կործանման ֆաղաքէն երկնային ֆա. ղաքը : Եւ այժմ որ կը յիշենք զՊր. նիան կարծես դարձեալ կը տեսնենք զֆրիստիանտո մինչ կը մաքառի յու. սահաաութեան փոփին մէջ, մինչ կը մանէ նեղ դռնէն, կ'ազատի իւր բե. ուն խաչին առջև, մարտիրոսութեան վտանգի կ'ենթարկուի ունայնութեան



ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՐԵՍԻՍԻՍ ԱՐԶԱՆԸ

տօնավաճառին մէջ, կը բանտարկուի Հսկայ Յուսահաաութիւնին ամբողջն մէջ, կը վայելէ երջանկաւէտ տեսա. բանն բեւալայ երկրէն, և վերջապէս կ'անցնի ցուրտ գետէն, և կարծես հրեշտակաց ձայներ կը հասնին մեր ականջներուն և նա ուրախութեան ողջունի. կ'ընդունուի Թագաւորին քաղաքը :

րէն ոմանք սուտ եղբայր կը համարէին զնա :

Պրնիանի մահը արդիւնք էր ողոր. մութեան գործոյ : Հայր մը բարկա. ցած էր իւր երիտասարդ որդւոյն, և Պրնիան զնաց հաշտեցնել զնա, և յա. ջողեցաւ համոզել որ ժառանգութեան չզրկէ իւր որդին : Երբ այս պաշ. ատնը կատարելէ ետև ձիով ետ կը դառնար տուն, սաստիկ անձրևի բըռ. նուեցաւ, որով տենդ եկաւ վրան և մեռաւ յամին 1688 :

ԱՍՏՈՒԱՆԻ ԿԸ ՃԱՆՉՆԱՅ ԶՎԵՉ

Ծննդեան տօնին ժամանակները երեկոյ մը աղնուական մը կը ճեմէր թորոնթոյ քաղաքին փողոցներէն միոյն մէջ, և այնպէս կ'երևէր թէ չունէր ընելու մասնաւոր բան մը այլ կ'ուզէր ժամանակ անցունել: Մտոր ուշադրութիւնը գրաւեց փոքր աղջկան մը խօսքը որ պողպատաճառի մը խանութին առջև կանգնած կ'ըսէր իւր ընկերին:


«Կ'ուզեմ դնել նարինջ մը մայրիկին համար:»

Աղնուականը տեսաւ որ թէպէտ այն սողայք հագած էին աղքատին հանդերձներ սակայն էին մաքուր և վայելուչ, և կոչելով զանոնք պաշտօնականաբար խանութին քով տուտանոնց առատ պտուղ և շաքարեղէն: «Ի՞նչ է անունդ,» հարցուց աղջկանց մին:

«Ենչա՞հ համար կ'ուզես դիտնալ անունս,» ըսաւ աղնուականը:

«Իս կ'ուզեմ աղօթել քեզի համար,» պատասխանեց աղջիկը: Աղնուականը անդին դարձաւ մեկիկ, հազիւ ուրեմն համարձակելով խօսել բան մը, մինչ փոքրիկ աղջիկը յաւելցուց ըսել:

«Հոգ չէ ինչ որ ըլլայ անունդ, Աստուած կը ճանչնայ զքեզ արդէն:»



ԱՊԱԿԻ ՇԻՆԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԱԸ

Երբէք խորհամք էք թէ ինչէ՞ և ի՞նչպէս կը շինուի ապակին: Մենք կը գործածենք ապակին հարիւրաւոր բաներու համար: Պատուհաններու, սեղանի պնակներու, հայելներու և զամբարներու համար կը թուի թէ ապակին անհրաժեշտ պէտք մի է. և սակայն ուստի՞ կու գայ այն: Կը շինուի «փէյպլէ», որ է տեսակ մը սպիտակ աւազ, և անոր հետ կը խառնուի կամ «օփ» կամ «ֆօլ»-ը, նաև կը կամ երկաթոյ կամ ուրիշ մետաղի ժանգ պարակոյն տեսակին համեմատ զոր կ'ուզուի շինել: Ապակի շինելու կերպը կը ցուցուի պատկերին մէջ:

Նիւթերը որոցմէ պիտի շինուի այն, իրարու խառնուելով կը հալեցունին բովուրդ մէջ որ կրնան գիմանալ սաստիկ ջերմութեան: Անգամ մը ես այցելեցի ապակոյ գործարանի մը Ամերիկա, և հոն գտնուողք ըսին ինձ թէ ի սկզբն հարկագրեալ էին ուղիւնուէն անդին ապապրել տեսակ մը հող որմէ շինէին բովք կամ հարց: Երբ ապակոյ նիւթը կը հալի, արուեստաւորը

կը խոթէ անոր մէջ երկար երկաթ խողովակ մը և կ'առնու անկէ որչափ որ կ'ուզէ, այնուհետև կը փչէ խողովակին միւս ծայրէն, ինչպէս որ կը տեսնէք պատկերին մէջ, ժամանակ ժամանակ ճօճելով զայն մինչև որ ապակին սառնայ ուղուած մեծութիւնն և ձևը: Զարդիս սրուակներ և նման

փակցուի: Անշուշտ այս գործողութիւնը կ'ըլլան մինչ ապակին է տաք և կակուզ: Այնուհետև տափակցած մեծ կտորը կը կտրուի քառակողմ ձևերով մասանց այլևայլ մեծութեամբ: Բայց իւրօրոքանչիւր ձև ապակոյ շինութիւնն ինքնին է մասնաւոր արհեստ: Կայ տեսակ մը ապակի ճնշեալ



ԱՊԱԿԻՍ ԳՐԵԱՐԱՆ

բաներ շինելու տեղի սովորական կերպն է փչել կողպարի մէջ: Շատ հետաքրքրական է տեսնել պատուհանի ապակեաց շինուիլը: Արուեստաւորը փչելով կը ձևացունէ ահագին գլան մը քովն ունենալով փաս մը որպէս զի ճօճէ զայն անոր մէջ, և երբ կ'ըլլայ պատրաստ, կը բացուին զլանին երկու ծայրերը, կը ճեղքուի այն մէկ ծայրէն մինչև միւսը և կը դուրս սեղանոյ մը վրայ և ճնշուելով կը տա-

կուշուած, որ կը շինուի թափելով հալած նիւթը կողպարի մէջ, և յետոյ ծանր գործի մը դնելով անոր վրայ կը ճնշուի կողպարին ամէն կողմը: Յղկեալ ապակին (եւս իւր) որ է առաւել ընտիր, կը յղկուի և կը փայլեցուի այլևայլ տեսակ թաւարող նիւթերու միջոցաւ, ինչպէս կը տեսնուի պատկերին վերի դիւն աջակողմեան անկիւնը:

ՏԵՐՈՒՆԻ ԲԺՇԿՆԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

«Տղայք, փորձիկ պատմութիւն մը ունիմ ընելու ձեզ», ըսաւ ծերունի բժիշկ մը տղայոց խումբի մը : «Մինչ էի մանուկ երկայն և տաք օր մը, տեսայ հայրս ճամբուն վրայ որ կ'երթար քաղաք :

«Կ'ուզեմ որ սա ծրարը դիւղ տանիս, Յակոբ», ըսաւ ինձ վարանելով :

Անտան էի տաններկու տարեկան, չէի սիրեր դործել, և նոր կը դառնայի արտէն ուր շարունակ աշխատած էի առաւօտէն հետէ : Էի յոգնած և անօթի, և վրաս փոշոտած էր : Կը գտնուէի դիւղէն երկու միոն հետի : Կ'ուզէի ընթերել, լուացուիլ և մաքուր հանդերձներ հագնիլ երգի դասի երթալու համար :

Ի սկզբան ուզեցի մերժել և տալ խիստ պատասխան, վասն զի ինձ շատ անհաճոյ եկաւ անոր այն առաջարկութիւնը օրուան երկար աշխատութենէս ետքը : Եթէ մերժէի, հայրս ինք պիտի երթար անձամբ : Կա էր մեղմ, համբերող ծերունի մը : Բայց կասեցուց զիս բան մը, և կարծեմ Աստուծոյ բարի հրեշտակայ մին էր այն :

«Անշուշտ, հայր, պիտի տանիմ զայն», ըսի ի սրտէ, ձեռքս գտնուող մանգաղը ապով ընկերներէս միոյն : Հայրս տուաւ ինձ ծրարը :

«Շնորհակալ եմ քենէ, Յակոբ», ըսաւ, «եթէ դու չըլլայիր, ես պիտի երթայի անձամբ, բայց կը զգամ թէ սյսօր շատ զօրաւոր չեմ» :

Ինձի հետ քաղելով եկաւ մինչև հասարակայ ճամբուն անկիւնը որ կը դառնար դէպի քաղաքը, դրաւ իւր ձեռքը բազկիս վրայ և ըսաւ դարձեալ, «Շնորհակալ եմ քենէ, որդեակիմ, դու միշտ բարի տղայ մը եղած ես ինձ» :

Աճապարանօք գայի դիւղը և վերրստին դարձայ ետ : Երբ մեր տանը մտեցայ, տեսայ երկրագործաց ամբոխ որ խոնուած էին գրանն առջև : Անոնցմէ մին եկաւ առ իս, արտասուք կը հոսէին անոր աչուքներէն, և ըսաւ, «Հայրդ ինկաւ մեռաւ ճիշդ անտան որ հասաւ տուն : Եւ անոր վերջին խօսքերն ուղղուած էին քեզ» :

Ես հիմա ծերացած եմ, բայց շնորհակալ եղած եմ Աստուծոյ կրկին և կրկին բարբ աստիներուն մէջ որ անցան այն ժամէն հետէ մինչև ցայժմ, թէ հօրս վերջին խօսքերն էին, «Դու միշտ բարի տղայ մը եղած ես ինձ» :


Եւ ոչ մի մարդ երբէք ցաւած է սիրոյ կամ մարդասիրութեան համար զոր ցուցուցած է ուրիշներու : Բայց

չկայ ցաւ և վիշտ այնչափ սուր քան որչափ այն դառն զգացումը որով կը յիշենք զանցառութիւնը կամ պաղարխնութիւնը զոր ցուցուցած ենք մեր սիրելեաց որ մեռած են :

Մի գրանար սիրոյ գործեր և քաղցր խօսքեր մասնաւորապէս անոնց որ քեզի հետ կը վերաբերին միևնոյն ընտանեաց և կը նստին միևնոյն սեղանին շուրջը : Կան շատ տուններ ուր դեղ և ցասկոտ բնաւորութիւնը հետզհետէ կը ծածկէ սիրոյ իրական զգացումը որ կը գտնուի սրտին շատ խորը :

Եւ յոյժ կարճ ժամանակ պիտի մնանք մեր սիրելեաց հետ :

Գիտունք համրած են իբր 27,000 տեսակ խեցեմորթ կենդանիներ, որոցմէ միայն իբր 12,000 կ'ապրին հիմա : Միւս 15,000 տեսակը շնջուած են, բայց անոնց կեղեկները տակաւին կը գտնուին փակած ծովուն ժայռերուն կամ թաղուած անոնց մէջ : Կակղափս կենդանեաց ոմանք ունին այնպիսի խեցի որ անոնց գեղեցիկ ձևոյն և պայծառ գունոյն պատճառաւ յարգի են իբրև զարդ : Շատ անգամ կ'ուզենք հարցունել թէ ինչու համար Աստուած թաղած է այսքան գեղեցիկ բաներ ծովուն ալեաց ներքև ուր ոչ ոք



ԻՆՏԻՔ

Ի Ն Յ Ի Ք

Իրօրու բնակիչներէն ոմանք ունին գեղեցիկ տուններ, և սակայն ասոնք են իրապէս նոյն իսկ այն կենդանեաց մարմնոյն մասը : Մարդիկ, չորքոտանիք և թռչունք ունին սակը իրենց ներքին կողմը, նման շինուածոյ մը գերաններուն, և անոնց վրայ պատած են մասններ, շիղեր, շնչերակներ և մորթ : Բայց կենդանիք որ կը կոչուին կակղամիք, որպիսի են խղունձը, ոստրէն, խեչագիւտը, և այլն, ունին մարմին կակղուղ, և խեցին կամ կեղևը որ է անոնց սակը, է անոնց մարմնոյն դրսի կողմը, որով կը պաշտպանուի : Կակղամիս կենդանեաց շատը կը բնակին ծովուն մէջ, բայց քիչեր, ինչպէս խղունձը, կը գտնուին ցամաքի վրայ :

կը տեսնէ զանոնք : Մի միայն պատճառը զայս կրնանք համարել, թէ Աստուած ինք կը տեսնէ զանոնք և կը հրճուի : Կան տեսակ տեսակ խեցիներ որ կը գործածուին իբրև ստակ խաղաղական ուղիանստի կողեաց մէջ, կան խեցիներ ևս որոց մէջ կը գրանուի պատուական մարգարիտ : Խեցեմորթ կենդանեաց խեցիները կը գործածէին նաև հին Աթենացիք իբրև քուէ, որոց վրայ կը գրէին անուններն այն մարդոց զորս կ'ուզէին աքտորել : Եթէ մարդու մը անուն գտնուէր գրուած բառական թուով խեցիներու վրայ, կ'աքտորուէր քաղաքէն : Մարդիկ կը ժողվեն խեցիներ անոնցմէ շինելու համար կիր, նաև փոշիացունելով զանոնք կը գործածեն իբրև պարարտացուցիչ հողոյ : Երբ կը նայինք

այս պատկերին վրայ, կու գայ մեր միտքը սա խորհուրդը. Եթէ բնակիչ չգտնուէր ծովուն մէջ, պիտի ըսէինք թէ կենդանի չէր կրնար ապրել հոն, վասն զի բոլոր ցամաքային կենդանիք կը խեղդուէին անոր մէջ: Բայց մենք կը տեսնենք թէ Աստուած ստեղծած է հազարաւոր տեսակ ձկներ և կակղամիսներ, և յարմարուցած է զանոնք ապրել ծովուն մէջ: Այսպէս նաև երբ գիտունք կ'ըսեն մեզ թէ կենդանի չկրնար ապրել լուսնի և կամ աստեղաց շատերուն մէջ վասն զի անոնք շատ տարբեր են մեր աշխարհէն, կ'ըսեն աւելի քան զոր գիտեն: Ճիշդ այնպիսի էակներ որ կ'ապրին աշխարհիս մէջ՝ չէին կրնար ապրել լուսնի կամ աստեղաց մէջ, բայց Աստուած դիւրաւ կրնայ յարմար էակներ ստեղծել որ ապրին անոնց մէջ, ինչպէս որ ձկներն ստեղծած է յարմար ապրելու ծովուն մէջ:

ՓՈՔՐԻԿ ՏԱՆՈՒՑԵՐԸ

Շատ քիչ կը պատահի որ տասն տարեկան տղայ մը վարի իբրև տանուտէր, կամ տան հոգն իւր վրայ առնու, և սակաւք կը ցուցնեն այնչափ քաջութիւն և խոհականութիւն որչափ ցուցուց տղայ մը հետագայ դեպքին մէջ, զոր կը պատմէ Չիգակոյ քաղաքին լրագիրներէն մին:

«Այո, ես ունիմ ամէն տեսակ վարձակալներ», ըսաւ զուարթադէմ ծերունի աղնուական մը, «բայց անոնց մէջ ինձ ամենէն սիրելին է տղայ մը որուն տարիքը չանցնիր տասնէն անդին: Քանի մը տարի առաջ դնեցի կտոր մը երկիր արևմտեան կողմը, Տեսայ թէ անոր մէջ կար խրճիթ մը, բայց ուշադրութիւն չըրի անոր: Ժամանակ մը ետքը եկաւ մարդ մը և խնդրեց ինէ որ վարձու տայի զայն անոր:

«Ի՞նչ պիտի ընես զայն», ըսի:

«Մէջը պիտի բնակիմ», պատասխանեց մարդը:

«Շատ լաւ», ըսի, «կու տամ քեզ: Հատի ինձ իբրև վարձ ինչ որ կը համարիս թէ կ'արժէ:»

Առաջին ամսուն բերաւ ինձ երկու տարեւ, և երկրորդ ամսուն՝ փոքրիկ տղայ մը որ ըսաւ իրեն համար թէ այն մարդուն տղան էր՝ բերաւ երեք տարեւ: Այնուհետև կը տեսնէի մարդը ժամանակ ժամանակ, բայց այն փոքր տղան էր որ կը բերէր կը հասուցանէր ինձ ստակը իւր ժամանակին կանոնաւոր կերպով, երբեմն երկու և երբեմն

երեք տարեւ: Անդամ մը հարցուցի տղին, թէ ո՞ր էր հայրը:

«Մեռաւ, տէր իմ», պատասխանեց տղան:

«Իրա՞ւ», ըսի, «ո՞րչափ ատեն եղաւ մեռնելը?»

«Աւելի քան տարի մը», պատասխանեց նա:

Առի ստակը, բայց միտքս դրի երթալ և քննութիւն մը ընել և աղէկ մը հասկնալ բանը: Յաջորդ օրը գացի անոնց բնակարանը, որ պահուած էր բաւական մաքուր և վայելուչ: Զարկի դուռը և փոքրիկ աղջիկ մը ներս առաջնորդեց զիս: Հարցուցի թէ ո՞ր էր մայրը: «Մայր չունիմ», պատասխանեց աղջիկը:

«Ի՞նչ է նա», հարցուցի անոր:

«Չենք գիտեր, տէր իմ, մեկնեցաւ անէն հօրս մեռնելէն ետքը, և յայնմ հետէ բնաւ տեսած չենք զնա», ըսաւ աղջիկը:

Ճիշդ անատեն իբր երեք տարեկան փոքրիկ աղջիկ մը մտաւ ներս, և իմացայ թէ այս երեք փոքր մանկունք ի միասին կը բնակէին տունը մէկ ու կէս տարիէ հետէ: Տղան կը պահէր իւր երկու փոքրիկ քոյրերը կոշիկ ներկելով և լրագրեր վաճառելով, և երիցագոյն աղջիկը տան դօրծերն ընելով և զմանկիկը հոգալով: Ես չուտով զրկեցի իմ դուստրս որ այցելութիւն ընէր անոնց, և այնուհետև մեր յատուկ հսկողութեան առարկայ ըրինք զանոնք: Խորհեցայ թէ պէտք չէր որ փոփոխութիւն մտցունէի անոնց առինի վիճակին մէջ մինչ կրնային հոգալ զիրենք: Երբ յաջորդ անգամ տղան բերաւ ինձ բնակարանին վարձը, խօսեցայ անոր հետ քիչ մը և յետոյ ըսի, «Տղաս, շարունակէ ինչ որ սկսած ես և բնաւ պիտի չցաւիս: Պահէ քու փոքրիկ քոյրերդ ևս և բնաւ մի թուր դանոնք: Հիմա նայէ հոս:»

Անատեն ցուցուցի անոր ստմար մը որոյ մէջ դրած էի բոլոր ստակը զոր հատուցած էր ինձ իբրև վարձ բնակարանին, և իմացուցի թէ անոնք բոլորն իրենն են շահին հանդերձ: «Յառաջ դնա», ըսի, «այդ ընթացքով, ես կ'ըլլամ քու դրամատէրդ, և երբ այս ստակը քիչ մը աւելնայ, պիտի աշխատիմ որ սուն մը գնես քեզ սեպհական բնակարան ըլլալու համար:»

Այսպիսի վարձակալ սիրելի է ունենալ:

ՃՇՄԱՐՏԱԽՕՍ ԵՒ ԱՍԱԽՕՍ ՏՂԱՅԻ

Գանձ է այն տղան որ կը խօսի ճշմարտութիւն, որուն խօսքին կրնայ

վստահուիլ, որ կը խոստովանի իւր յանցանքը: Եթէ նա յանցանք կը գործէ այս օր, վաղիւ պիտի ըլլայ աւելի բարի. եթէ դօրծէ սխալներ, կրնաս ցուցնել զանոնք ուղղելու կերպը. եթէ է անխոհեմ, կրնաս խրատել և զգուշացունել զնա, և կրնաս ըլլալ ուրախ տեսնելով անոր յառաջադիմութիւնն օր ըստ օրէ իմաստութեան, և առաւել զօրաւոր, աւելի բարի ըլլալու մէջ, այնպէս որ մինչև անգամ իւր մանկութեան հասակին մէջ կարող ըլլայ բռնել չափահաս մարդու մը տեղը, և ըլլայ առաւել յարգելի քան շատ մարդիկ որոց կարելի չէ վստահել:

Այսպիսի տղու մը համար բարի բաներ կան ապագային մէջ: Այսպիսի անձ մը կը փնտռուի անոր գործ յանձնելու համար, որպէս զի կատարէ համեստ գործ, վարէ կարևոր պաշտօն, հսկէ ըմբոստ անձանց վրայ որոց վրայ չդրուի վրստահութիւն: Կը փնտռուի այնպիսին որպէս զի ստանձնէ ծանր պատասխանատուութիւն ունեցող պաշտօններ, կարգադրէ մեծ ձեռնարկութիւններ, ըլլայ զօրութիւն հասարակութեան մէջ, և օրհնութիւն ի տան: Կը փնտռուի այնպիսին որպէս զի ըլլայ այլ՝ համեստ, ճշմարտախօս և աղնի օրիորդի, կը փնտռուի որպէս զի ըլլայ գլուխ ընտանեաց, կը թէ զաւակներ արդարութեան ճամբաներուն մէջ, և իբրև անդամ՝ Քրիստոսի եկեղեցոյն՝ բարիք ընէ յաշխարհի և փրկէ մարդոց հոգիները:

Բայց այն տղան որ սուտ կը խօսի, ի՞նչ օգուտ ունի երկրի վրայ: Ի՞նչ գործ կրնայ ըլլալ անոր հետ: Ոչ ոք երբէք կը հաւատայ և ոչ ոք երբէք կը վստահի անոր: Ոչ ոք գիտէ թէ երբ սուտ կը խօսի նա, և ոչ ոք կը համարձակի հաւատալ երբ կը խօսի ճշմարտութիւն:

Որդեակ իմ, Աստուած սուտ է քեզ լեզու՝ խօսել ճշմարտութիւն և երգել փառաբանութիւն անոր, և աւելի լաւ է քեզի համար որ խաճնես փրցունես լեզուդ քան թէ գործածես զայն խօսել սուտ, վասն զի «Բոլոր ստախօսներուն բաժինը կ'ընէ ըլլայ կրակով և ծծմբով վառած թիւ մէջ, որ է երկրորդ մահը»:

Աւերելոյի Միտիանարաց ընկերութեան կողմէն, Խմբագիր ձ. Բ. ԿՐԻՆ
Փոխ-Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ
Ֆինանսըլար եղբուշու, Աւերիգան Խան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՅՊԱՐԱՆ Ա. ՅԱՌՈՐ ՊՅՅԱՆԱՆ